13. ՄԻՐԶԱ ՄԱՀՄՈՒԴ ՈՒ ՋԱՄՊՈԼ

Թագավոր մը կէղնի, ուրեն՝ իրեք տղա։ Թագավոր օր կմեռնի, տղեկներուն կըսա.—Տղա՛, լառ՛, ընա մեկ բարակ ճամբով չէրթաք։

Թագավոր կմեռնի, ջոջ տղեն՝ Միրզա Մահմուդ, կըսա.—Ախպրտա՛նք, քելեք էրթանք ըգ ճամբու հետ օր մըր պապ կվախներ։

Կէլնին, զուրանց ջաք ու սիլեն կկապին, կէրթան ըգ ճամբու հետ, չուրի հ՚իրիկուն կքելին, հ՚իրկուն Միրզա Մահմուդ կըսա ուր էրկու ախպոր.—Դուք քնեք, ես կկանիմ խարախոլ։

Ախպրտանք կքնին, ինք կկանի խարախոլ։ Չուր մի կես գիշեր կմնա, կտեսնա օր պառավմ՚ էն դիեն էկավ, կըսա.—Միրզա՛ Մահմուդ, բարով էկար։ Ես ճրագով կգաշենք զքզիկ, անճրագ գտա։

Միրզա Մահմուդ ու պառավ կկովին։ Միրզա Մահմուդ զպառավ կսպանա։ Միրզա Մահմուդ կիշքա օր պառվու պուպուշի տակ իրեք բալնիք կա։ Զբալնիքներ կառնի ուր մոտ, զպառավ կտանի թալա։

Կպառկի ինք լա կքնի ախպրտոց մոտ, հընչի լուս։

Լուսուն կէլնին հիդրաց կէրթան։ Կէրթան պառվու հ՚օգեք կբանան, տեսնան օր իրեք հատ հուրնիկ-հրեղեն ախչիկ հանդ է, հ՚օդեսներու մեջ։ Միրզա Մահմուդ կասա.—Ջոջ ախչիկ՝ ընձիկ։ Միջնեկ ախչիկ լա իմ միջնեկ ախպոր, պզտիկ լա՝ պզտկին։

Ու կէլնին հ՚ոցկի կիգան։ Կիգան սարի մը գլուխ շինութենի մը ռաստ կիգան։ Կմտնին շինութենի մեջ, կիշքին օր յոթ կանթեն

պղինձ մը արնե փլավ դրուկ վրը թվեքին։ Թավլեն լա լիք ձի ա կապուկ։

Միրզա Մահմուդ կասա ախպրտոց.—Ախպրտանք, իդա շինութենին տեր մը կա հալբաթ, դու պատվտեք, ես՝ կկայնիմ հղուր։

Միրզա Մահմուդ կկայնի հղուր։ Կտեսնա օր Ջամպոլ ծառ մը վրը թեին էկավ։ Կըսա.—Մա՛րդ, մարդահո՛տ կիդա։

Միրզա Մահմուդ կէլնի առեշ։

Կըսա.—Միրզա Մահմուդ, դու բարով էկար։ Ես հ՚ըմն օր զքզի կդաշենք, անդաշել դտա։

Էմլա Ջամպոլ կըսա.—Մա՛րդ, մարդահո՛տ կիդա։

Միրզա Մահմուդ կըսա.—Մարդ չկա։

Ջամպոլ կըսա.—Կոլորտիմ, որն օր դտա՝ կուտիմ։

Միրզա Մահմուդ կըսա.—Իմ էրկու ախպերն ին հ՚ոդի։ Ուրիշ մարդ չկա։

Ջամպոլ կըսա.—Քու ախպրտանք ճամբցու, դու մանցի հ՚ոդա։

Միրզա Մահմուդ կէլնի զուր ախպրտանք կճամբցու։ Ինք կէրթա Ջամպոլի մոտ։

Ջամպոլ կըսա.—Միրզա Մահմուդ, դնա՛ ընձիկ Մերի Նիդար բեր։ Կթողիմ զքզի կէրթաս։

Միրզա Մահմուդ կհեծնի զուր ձին կէրթա։

Ջամպոլ կըսա Միրզա Մահմուդին.—Զրփախնես, ես օր էլնիմ տանիս ֆշամ, հուր էղնիս՝ կիդաս իմ բերնի հ՚առեշ։

Միրզա Մահմուդ կկանչա ուր աստված, կէրթա։ Շատ ու քիչ կէրթա, մութ քաղքի մը ռաստ կիդա։ Կէրթա կմտնի պառվու մը տուն։ Պառվուն կէղնի խոնախ։

Պառվուն կըսա.—Պառա՛վ, ես շատ ծառավ իմ։

Պառվու տուն շուր չէղնի։

Պառավ կըսա.—Միրզա Մահմո՛ւդ, շուր չկա՛ մըր տուն։ Հ՚ուշափ կանուկ ա ջրի վրեն, շաբաթ օրնե շաբաթ օր մեկ-մեկ ախչիկ կտանինք հ՚ուշփին՝ նոր ջուր կիտա։

Ըդ օր ուրբաթ օր կէղնի։

Միրզա Մահմուդ կըսա պառվուն.—Պառա՛վ, երբ օր զախչիկ տարաք տվիք հ՚ուշփին, ընձիկ ըսա։

Շաբաթ օր կառնին զռեսի ախչիկ, կէրթան։ Պառավ կիդա Միրզա Մահմուդին կըսա.—Հանդե, ախչիկ տարան։

Միրզա Մահմուդ կէլնի կէրթա։ Գետի պռուկ, ախչիկ կառնի գեղացոց մոտեն։ Հ՚ուշիկ կտանի հ՚ուշփի բերնի առեջ, հ՚ուշափ օր բերան կթալա ախչիկ, Միրզա Մահմուդ թուր մը կզարկի հ՚ուշփի վզին, կսպանի։

Գեղացիք հ՚ըմեն ուրանց ջուր կտանին։

Ռես կասա.—Ձէդ տղեն բերեք տեսնանք ըդ իմա՞լ մարդմ՚ ա։

Կառնին Միրզա Մահմուդ կէրթան ռեսի մոտ։

Ռես Միրզա Մահմուդին կըսա.—Ինչ օր կուզիս, կիտամ։

Միրզա Մահմուդ կըսա.—Ես լա քու պես թագավորի մը տղա չիմ։

Ռես խըմբրլկի մը քոլոս կիտա Միրզա Մահմուդին։ Միրզա Մահմուդ կէլնի հ՚ոնկի կէրթա, կէրթա Մերի Նիգարի քաղաք։ Կէրթա պառվու մը տուն, կէղնի խոնախ։ Պառավ չթողա։ Ճանկ մ՚օսկի կիտա պառվուն, կմնա հ՚ոդի։ Հ՚իրկուն կտեսնա օր լուսնակ չկա, լո՛ւս տվեր ա քաղքի մեջ։ Պառվուց կհարցուցա.—Պառա՛վ, ըդ ի՞նչ լուս ա։

Պառավ կասա.—Մերի Նիգար ուր գլուխ փանջարից թալեր է դուս, հարքեշ ուրանց ճախռակ կմանին։

Միրզա Մահմուդ կասա պառվուն.—Ըսկի Մերի Նիգար դուրս չէ՞ղնի։

Պառավ կըսա.—Լուսուն կէրթա կլողկնա գետ։

Միրզա Մահմուդ կըսա.—Ինչ գախ օր գնաց, ընձիկ ասա։

Լուսու դին, արև օր կտաքնա, Մերի Նիգար իրեք հարիր ձիավորով կէրթա լողկնա։

Միրզա Մահմուդ լա կէլնի հեծնի զուր ձին, գողտուկ կէրթա գետի պռուկ, կպատվրտի։

Մերի Նիգար օր կտկլոզնա, կմտնի մըջ ջրին, մեկ ասքար լա կտկլոզնա մտնի մեջ։ Մերի Նիգար կասա.—Խոզի մկա Միրզա Մահմուդ հ՚ոդ էդներ օր քու հախեն իգեր։

Միրզա Մահմուդ էնդիհեն զինք կթալա մեջ ջրուն, կվերու ղՄերի Նիգար, կթալա ձիու թարկ, կէրթա։

Ջուհար կտանին Մերի Նիգարի պապուն, թը.—Հողեղեն տարա՛վ զհրեղեն։

Թագավոր կնկան կըսա.—Քու ասքար թ՚էրթա։

Կնիկ լա թագավորին կըսա.—Քու ասքար թ՚էրթա։

Հընչ օր կէլնին զասքար կճամբցուն, Միրզա Մահմուդ զՄերի Նիգար կտանի։ Էլ չըն հասնի, ե՛տ կդառնան։

Միրզա Մահմուդ կառնի զՄերի Նիգար, կիգա Ջամպոլատի մոտ։ Կնստի հ՚ոգի հընչ իրկուն։ Հ՚իրկուն օր Ջամպոլատ գոնեն կմտնի, կըսա.—Մարդ, մարդահոտ կիգա։

Միրզա Մահմուդ կէլնի առեջ։

Ջամպոլատ կըսա.—Մերի Նիգար բերի՞ր։

Կըսա.—Բերեցի։

Կըսա.—Դե դու գնա՛։

Միրզա Մահմուդ կէլնի կէրթա։

Լուսուն օր Ջամպոլատ կէրթա, Միրզա Մահմուդ կիգա տուն, Մերի Նիգարին կըսա.—Մը՛ վախենա, հ՚իրկուն օր Ջամպոլատ էկավ, քու նիաթ կախա, օր ասեց՝ ի՞նչ էզե, ասա՝ հիվանդ իմ։

Հ՚իրկուն օր Ջամպոլատ կիգա, Մերի Նիգար նիաթ կկախա։

Ջամպոլատ կասա.—Ի՞նչ ա էզե, Մերի Նիգար։

Կասա.—Հիվանդ իմ։

Կասա.—Հիվընդնալ ի՞նչ ա։

Մերի Նիգար կասա.—Մենք կհիվընդնանք, կմեռնինք։

Ջամպոլատ կըսա.—Մերի Նիգար, մը վախենա, ես չըմ թողի դու մեռնիս։

Մերի Նիգար կըսա.—Մըզիկ հոգի կա, հրեջտակ կիջնի, մըր հոգին կառնի, իդախ կմեռնինք։

Ջամպոլատ կըսա.—Հրեջտակ օր էկավ, ես կրռնիմ կսպանիմ, —կըսա,—հոգին ի՞նչ ա։

Մերի Նիգար կըսա.—Հ՚որի հոգի չկա՞ քզի։

Կըսա.—Իմ հոգին ինա ցախավելն ա։

Լուսուն Ջամպոլատ օր կէրթա, Մերի Նիգար կվերու ցախավել կթալա թոնդիր։ Կտեսնա օր սուտ, ուր հոգին էդ չէ։

Հ՚իրկուն օր Ջամպոլատ կիգա, Մերի Նիգար ուր նիաթ էմլա կկախա։

Ջամպոլատ կըսա.—Հ՚որի՞ն ես կախի զքու նիաթ։

Կըսա.—Ապա հանա քու հոգին տուր խաղամ հետ։ Ես մինակ իմ, իմ սըբր չի գա։

Ջամպոլատ կըսա.—Աստված քու տուն ավրա, իմ հոգին հանգ է խութու մեջ։ Խութին հանդ է ճնճղու փոր։ Ճնճուղ հանդ է խազալի փոր։ Խազալ հանդ է Ճիայե Շանգա։

Լուսուն օր Ջամպոլատ կէրթա, Միրզա Մահմուդ կիգա Մերի Նիգարի մոտ, կըսա.—Ասե՞ց ուր հոգին քզիկ։

Մերի Նիգար կըսա.—Հա՛, ուր հոգին հանդ է խութու մեջ, խութին հանդ է ճնճղու փոր, ճնճուղ հանդ է խաղալի փոր, խաղալ հանդ է Ճիայե Շանգա։

Լուսուն Միրզա Մահմուդ կհեծնի ուր ձին ու կէրթա. Ճիայե Շանգա։ Կտեսնա, օր խաղալ մը էկավ, կսպանա, ճնճուղ ուր փոր չէ։ Խաղալ մ'լա կիգա, զէտի օր կսպանա, ճնճուղ հանդ է ուր փոր։ Ջամպոլատ կհիվնդնա։ Ճնճղու գլուխ կկտրա, զխութին կհանա։ Ջամպոլատ կընկնի հոգու առեջ։ Միրզա Մահմուդ խութին կբերա Ջամպոլատի հ'առեջ, լանկե մը կղարկա խութուն։ Ջամպոլատ կմեռնի։

Կառնե Ջամպոլատի հարստութեն, ձիեր, զՄերի Նիգար ու կիգա ուր հոր տուն։